«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2016 թվականի

Հեռակա ուսուցման համակարգում քննական դասընթացներից ստուգողական աշխատանքների պարտադիր կատարման մասին

Լսելով և քննարկելով **«Հեռակա ուսուցման համակարգում քննական դասընթացներից ստուգողական աշխատանքների պարտադիր կատարման մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **2016-2017 ուսումնական տարվանից վերականգնել հեռակա ուսուցման համակարգում քննական դասընթացներից ստուգողական աշխատանքների պարտադիր կատարումը** (ուսանողը քննության չի թույլատրվում ստուգողական աշխատանքի բացասական գնահատականի դեպքում): Յուրաքանչյուր ստուգողական աշխատանքի ղեկավարման և ստուգման համար տրվում է 0,25 ժամ:

2. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին.**
   1) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 20-ը ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժին ներկայացնել ստուգողական աշխատանքների թեմաներն ու դրանց կատարման մեթոդական ցուցումները.

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

22.06.2016 թ.